ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ «ԱՐՄԱՆ-ԵՐԵՄ» ՍՊԸ
РА ГЕГАРКУНИКСКАЯ ОБЛАСТЬ ООО "АРМАН-ЕРЕМ"
RA MARZ GEGHARKUNIK LTD "ARMAN-EREM"

ք. Գավառ, Արծվաքար թաղ., հեռ. (093) 19-66-68
г.Гавар ул. Арцвакар тел., (093) 19-66-68
c.Gavar st.Artcvacar, tel. (093) 19-66-68
էլ. փոստ arman-erem@mail.ru

№ 03-15/114

«09» սեպտեմբերի 2015թ.

ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար՝
տիկին Ս. Դավթյանին

«ԻՋՆԱԽ» ՍՊԸ տնօրեն՝
պարոն Հ. Սիմոնյանին

«Արման-Երեմ» ՍՊԸ-ն (ՀՀ քաղաքաշինության նախարարության լիցենզիա № 11945) դիտարկելով « ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնքի Սպանդարյան թիվ 10 բազմաբնակարան շենքի տանիքի վերանորոգում » աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը, երաշխավորում է նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրությամբ և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին:

Օբյեկտի շինարարության նախահաշվային արժեքը կազմում է 4172,00 հազար դրամ, ներառյալ ԱԱՀ:

Առդիր 2 թերթ:

Տնօրեն՝ Յու. Ավետիսյան

«Արման-Երեմ» ՍՊԸ

Հաստատում եմ՝
«09» սեպտեմբերի 2015թ.
Տնօրեն՝
Յու. Ավետիսյան

# ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ըստ *«ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնքի Սպանդարյան թիվ 10 բազմաբնակարան շենքի տանիքի վերանորոգում»* աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի

Պատվիրատու Տավուշի մարզպետարան — Նախագծող «ԻՋՆԱԽ» ՍՊԸ

Նախագծման հիմք է ծառայում Իջևանի քաղաքապետարանի կողմից տրված թերությունների ակտը ինչպես նաև փաստացի ուսումնասիրության և չափագրության արդյունքները: Հաշվի են առնված նաև պատվիրատուի բոլոր առաջարկները և պահանջները:

Նախագծով նախատեսված է՝

Քանդման աշխատանքներ.

- Տանիքի չվերանորոգված հարթ ցինկապատ թիթեղի ծածկի հատվածի քանդում վնասված փայտանյութի հետ միասին,
- Աստիճանավանդակի տանիքի ասբոթիթեղյա ծածկի քանդում փայտանյութով,
- Աստիճանավանդակից տանիք դուրս եկող փայտե դռանը և պատուհանի փոխարինում նորով,
- Աստիճանահարթակների գոյություն ունեցող փայտե պատուհանների քանդում

Վերանորոգման աշխատանքներ.

- Տանիքի վնասված փայտանյութի փոխարինում նորով,
- Տանիքի ծածկի կառուցում ցինկապատ հարթ թիթեղով 0,55մմ գլիկի հետ միասին
- Կցումների իրականացում ցինկապատ հարթ թիթեղով 0,55մմ
- Աստիճանավանդակի տանիքի կառուցում պրոֆիլավոր ցինկապատ թիթեղից ԿՊ21-0,55մմ հաստությամբ
- Օդափոխության բլոկների և աղբատար ասբեստե խողովակի վրա գլխերի կառուցում ցինկապատ հարթ թիթեղից
- Մետաղական դռան տեղադրում
- Բացվածքի շարվածք պ/բլոկով 20սմ հաստությամբ
- Մ/պլաստե պատուհանի տեղադրում
- Աստիճանահարթակների ստորին պատուհանների բացվածքների շարվածք պ/բլոկից 10սմ հաստությամբ
- Աստիճանահարթակների մ/պլ պատուհանների տեղադրում

Ներկայացված է նախահաշիվ *4172,00* հազ. դրամ գումարով:

Նախահաշվային փաստաթղթերը կազմված են շինարարական աշխատանքների գործող գների հաշվարկների մեթոդական ցուցումների հիման վրա, որը հաստատված է թիվ 05 03.05.2008թ. հրամանով ՀՀ Քաղաքաշինության Նախարարության կողմից:

Հաշվարկը կատարված է 1984թ. նորմերով և գներով կազմված տեղային նախահաշվի հիման վրա, կիրառելով աշխատավարձի հաշվարկային ինդեքսը՝ 2049,28 և մեքենաների շահագործման ինդեքսը՝ 2900,39: Միջին ամսական հաշվարկային աշխատավարձն ընդունված է 221835 դրամ: Նյութերի արժեքն ընդունված է 2015թ. №06 «Ինֆորմացիոն տեղեկագրի» տվյալներով: Լիմիտավորված ծախսերը հաշվարկված է ըստ տվյալ պահին գործող նորմատիվների:

Համաձայն վերը նշված դրույթի նախահաշվային արժեքները որոշելիս ընդհանուր գների հիման վրա հաշվի են առնված հետևյալ գործակիցները.

Շինարարական նյութերի արժեքին տրված է՝

ա - Տրանսպորտային ծախսերը հաշվի առնող գործակից - 1.132

բ - Այլ նյութերի չափը հաշվի առնող գործակից - 1.05

գ - Պահեստային, փաթեթավորման ծախսերը հաշվի առնող գործակից - 1.02

Նախագծանախահաշվային փաստաթղթերում նկատված թերությունները վերացվել են փորձաքննության ընթացքում աշխատանքային կարգով:

*Եզրակացություն:*

*« ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնքի Սպանդարյան թիվ 10 բազմաբնակարան շենքի տանիքի վերանորոգում»* աշխատանքների նախահաշվային փաստաթղթերը երաշխավորվում է նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրությամբ և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին:

Նախահաշվային արժեքը կազմում է *4172,00* հազ. դրամ, ներառյալ ԱԱՀ:

Գլխավոր ճարտարագետ Մ. Աղդայան

Գլխավոր մասնագետ Ա. Գրիգորյան